

այժմ՝ բովանդակութիւնը՝ որ այս կարգաւ է. Ա. Աշո Բ. (էջ 126). 1. Բագրատունեաց բուն ստացուածքները. 2. Աշո Բ. եւ Հայաստանի մէկա իշխանները, սահմանադրութիւն երկրին, ներքին քաղաքականութիւն Աշոյ (137). 3. Աշո Բ. եւ Հայաստանի նախարարութիւնները (138). —) Արծրունիք, Բ) Սիւնիք, Գ) Ճաղաց իշխանութիւնները (157). 4. Հայ եկեղեցին Աշո Բ. ատեն (157). 5. Աշո Բ. արտաքին քաղաքականութիւնը (163): Որչափ որ ալ այս բաժանմանց մէջ մէկ երկու նորութիւն կը տեսնուին (զոր օր. Հայկական ցեղերու վրայ առանձինն խօսիլ), սակայն շատ պահանքներ ալ կը նշմարուին: Սակայն այս պահաւոր առեւելոյժ է, ինչու որ Մեծ, Հեղինակը տարի մը յառաջ իր հետեւեալ գործքին մէջ զայն լեցուցած է. Die inneren Zustände von Armenien unter Ašot I. (Halle 1904, էջք 1—52): Այս գործքին մէջ կարգաւ կը շջափէ հետեւեալ նիւթերը. Արաբացի դաղուծն ի Հայաստան Աշո Բ. օր ժամանակ. Հայաստանի ղայկերին եւ Աշո Բ. Առանձինն առանձինն ինքնակաց երկրամասերու կառավարութիւնը. Դրամ եւ հարկ. Զինուորութիւն Աշո Բ. օր ատեն. Ղաճառականութիւն, արուեստ եւ երկրագործութիւն Աշո Բ. օր եւ Սմատ Ա. օր ժամանակ: Ասոնց վրայ կարելի էր աւելցնել. Դատաստան, քաղաքք եւ իրենց յարաբերութիւնը, ամուսնութիւն, դատարարականութիւն եւն, Գրեթէ նոյն բովանդակութիւնն ու նոյն կարգն ունի Սիմէ Բ. մասը, ուստի աւելորդ կը համարինք յառաջ բերել: Ուրախ ենք որ այս տարաբախտ թագաւորին վրայ այն անիրաւ դատաստան չէ կորած Թօփչեան, զոր քննադատի պաղարիւնութեամբ կատարած է Պ. Գաղբաշեան:

Մինչեւ ցայս վայր ըստաներէն տեսնուեցաւ թէ ըստ մասին նոր նիւթերու միեքք մը սկսած է ամբարուիլ: Սակայն այս պաշարը տակաւն ոչինչ է. կարելի է յիշատակող սպասել: Բացայայտ խօսելու համար, ընթերցողը չի գիտանար երբ կը տեսնէ այն վերնագիրները (զոր օր. Արուեստ, Դրամ, հարկ եւն) եւ անոնց թերի բովանդակութիւնը կը կարգայ: Միայն թէ յանգաւքը քննադատին չէ, այլ մեր պատմագրաց, որ այս նիւթերը հազեւ ուրեք կ'ակնարկեն: Ահա ասոր համար այս կարգի նիւթաց վրայ միայն այն ատեն կարելի է կարգաւորեալ ծառել՝ եթէ փոխոյ եւ հոյն տակ թաղուած հնութիւններն երեւան ելլեն:

Հ. Հ. Հ.

ԿՈՍՏԱՆԳՐԻՆ ԵՐԶԵՆԿՈՒՅԻ ԵՒ ԻՒՐ ԶԵՐԹՈՒԹՅՆԵՐԸ

ուսումնասիրութեամբ հրատարակէ Հ. Մ. Պոտուրեան:

Միջին դարու Հայ Նշանաւոր բանաստեղծներու հանդերձ ուսումնասիրութեամբ հրատարակութեան մէջ եթէ ոչ կարգի բայց արդեանց կողմանէ առաջին տեղին կը գրաւէ Արշակ Զօպանեան: Դուազ արդիւնք չունի նաեւ Մեծարդոյ Հեղինակս իւր առաջինայ գրութիւնով: Սակայն այս հրատարակութեան յառաջարկին մէջ մեզի աւելին կը խոստանայ (էջ 7): Կ. Երզնկացին իւր նմոյշ մը կը հրատարակէ այն ամբողջական հրատարակութեան, որ լոյս պիտի տեսնէ «Մտորին դարերու Հայ Ժողովրդական բանաստեղծութիւն» տիտղոսով:

Միեւրոյց Հեղինակը գիրքն այսպէս բաժնած է: Մինչեւ էջ 59 կը խօսի ձեռագրին, կոստանդնի վարուց (էջ 10), լեզուին ու տաղաչափութեան (էջ 14), բովանդակութեան (էջ 25) եւ բառերուն ու ոճին վրայ (էջ 48): Կը յաջորդեն կոստանդնի Գեթուածները (մինչեւ էջ 180) հանդերձ ծանօթութիւններով Հեղինակին: Կոստանդնի բանաստեղծութեանց մէջ աւելի յաջողած են վարդապետականները՝ քան պատմականները, որ չոր ու անձեւ ճաշացած են: Յաւելուածով մը (էջ 181) տակաւին մէկ երկու քերթուած ալ կ'ընծայէ Հեղինակը կոստանդնի նորնկացւոյ եւ բառարանով մը իր փակէ մատեններ — Ամենայն մասամբ յաջողած կրնանք համարել Հեղինակին ուսումնասիրութիւնը: Պակասը՝ զոր կը նշմարենք, այն է, որ իւր կողմանէ այս բանաստեղծութեանց արժէքը չի գնահատեն, այլ կը գոհանայ Ա. Զօպանեանի Անահատին (1905 թ. 5) կտոր մը յառաջ բերելով:

Հ. Հ. Հ.

ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

ՈՒՍՏՈՒՄՆԱԿԱՆ

ՄՄՏՆՆԱԳՐԱԿԱՆ — Ծորէշ. քննական ուսումնասիրութիւն. 363: — «Խոսքովի թարգմանիչ, եւ իւր իրկասիրութիւնները. 361: — Ցուցակ ճնաղազաց թարգմ. 370:

ԱՇՈՒՄՆԱԳՐԱԿԱՆ — Հին Հայոց տեղւոյ անունները. 376:

ՄՄՏՆՆԱՍՏՈՒՄՆԱԿԱՆ — Politische und Kirchengeschichte Armeniens unter Ašot I und Simat I. 382 — Կոստանդնի Երզնկացի. 384:

ԿՐԱՍԱՐԱՆԻԶ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՅԻ ԽՍՏԱԳՐԻ Հ. ԲՈՎԱՆԵՒ Կ. ՊԱՐՈՆԶ

ԿԻՆԵՆԵՅԻ ԵՒ ԵՒՐ ԴՐՈՒՅԻՆ ԵՐԶՐԱՆԵՐ

